Հետազոտությանը մասնակցելու համաձայնություն

Ձեզ առաջարկվում է մասնակցել հետազոտական ուսումնասիրությանը: Նախքան համաձայնելը, ձեզ պետք է տրամադրվի հետազոտական ուսումնասիրության ամփոփ նկարագրությունը: Այս ամփոփ նկարագրությունը պետք է պարունակի հիմնական տեղեկատվությունը՝ օգնելու ձեզ հասկանալ այն պատճառները, որոնց հիման վրա դուք կցանկանաք կամ չեք ցանկանա մասնակցել այս ուսումնասիրությանը:

Նախքան համաձայնելը, հետազոտողը պետք է ձեզ հայտնի.

(i) հետազոտության նպատակները, ընթացակարգերը և տևողությունը,
(ii) ցանկացած ընթացակարգ, որը փորձարարական է,
(iii) ուսումնասիրության ցանկացած ողջամիտ կանխատեսելի ռիսկերը, անհարմարությունները և օգուտները,
(iv) ցանկացած հավանական շահավետ այլընտրանքային ընթացակարգերը կամ բուժումները,
(v) ինչպես կպահպանվի գաղտնիությունը,
(vi) ում դիմել հարցերի, բողոքների և վնասվածքների դեպքում:

Անհրաժեշտության դեպքում, հետազոտողը պետք է ձեզ նաև տեղեկացնի հետևյալի մասին.

(i) ցանկացած հասանելի փոխհատուցման կամ բուժման՝ վնասվածք առաջանալու դեպքում,
(ii) անկանխատեսելի ռիսկերի հնարավորության,
(iii) այն հանգամանքների, որոնց դեպքում հետազոտողը կարող է դադարեցնել ձեր մասնակցությունը,
(iv) ցանկացած լրացուցիչ ծախսեր ձեզ համար,
(v) ինչ կպատահի, եթե որոշեք դադարեցնել մասնակցությունը,
(vi) երբ ձեզ կհայտնեն նոր բացահայտումների մասին, որոնք կարող են ազդել մասնակցության ձեր ցանկության վրա,
(vii) որքան մարդ կմասնակցի ուսումնասիրությանը, և
(viii) ինչպես դուք պետք է թույլ տաք օգտագործել ձեր բժշկական տվյալները ուսումնասիրության համար:

Ձեր մասնակցությունն այս հետազոտությանը կամավոր է, և դուք չեք ենթարկվի որևէ պատասխանատվության և չեք կորցնի նպաստներ, եթե հրաժարվեք մասնակցել կամ որոշում կայացնեք դադարեցնել ձեր մասնակցությունը: Այս փաստաթղթի ստորագրումը նշանակում է, որ ուսումնասիրությունը, ներառյալ վերը նշված տեղեկատվությունը, ներկայացվել է ձեզ բանավոր, և որ դուք կամավոր համաձայն եք մասնակցել: Եթե համաձայն եք մասնակցել, ձեզ կտրվի սույն փաստաթղթի ստորագրված օրինակը և հետազոտության գրավոր ամփոփագիրը անգլերենով:

Հարցե՞ր

Եթե ունեք հարցեր, բողոքներ, վնասվածքներ կամ այս ուսումնասիրության վերաբերյալ մտահոգություններ, կարող եք կապվել հետազոտողի հետ գրավոր ուսումնասիրության

ամփոփագրում նշված հեռախոսահամարներով: Եթե ունեք հարցեր՝ որպես հետազոտության մասնակից ձեր իրավունքների վերաբերյալ, կամ եթե ունեք հարցեր, բողոքներ կամ մտահոգություններ, որոնք չեք ցանկանա քննարկել հետազոտողի հետ, խնդրում ենք կապվել Ինստիտուցիոնալ գնահատման հանձնաժողովի գրասենյակի հետ՝ գրավոր ուսումնասիրության ամփոփագրում նշված հեռախոսահամարով կամ էլփոստով:

_____	_____	_____
Մասնակցի անունը	Մասնակցի ստորագրություն	Ամսաթիվ

Ես հաստատում եմ, որ ներկա եմ եղել որպես թարգմանիչ՝ այս հետազոտական ուսումնասիրության համար համաձայնություն տալու գործընթացի ողջ ընթացքում: Հաստատում եմ, որ ես որակավորված եմ և ունեմ անհրաժեշտ հմտություններ՝ մասնակցի լեզվի և անգլերենի միջև թարգմանություն տրամադրելու համար: Ստորագրելով այս ձևը՝ ես հաստատում եմ, որ լիարժեք և ամբողջական թարգմանել եմ համաձայնություն ստացող հետազոտողի և մասնակցի միջև զրույցը՝ իմ առավելագույն հնարավորության սահմաններում:

_____	_____	_____
Թարգմանչի անուն, ազգանուն	Թարգմանչի ստորագրություն	Ամսաթիվ